



[ՀՀ ՏԿԱԻ նախարարը խորհրդակցություն է անցկացրել մարզպետերի հետ](#), 28.10.2015

Հոկտեմբերի 27-ին ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանի մոտ անցկացվեց մարզպետերի հետ հերթական աշխատանքային խորհրդակցությունը: Խորհրդակցության ընթացքում քննակվեցին մարզերում իրականացվող հրատապ ծրագրի կատարման ընթացքին, համայնքների սեփական եկամուտների հավաքագրմանը, գյուղատնտեսական մթերքների մթերման գործընթացին, ինչպես նաև ընթացիկ տարում ՀՀ մարզերին հատկացված ազոտական պարարտանյութի և սերմացուի դիմաց գումարների փոխանցմանն առնչվող հարցեր: Տեղեկատվություն տրամադրվեց Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի մասին: ՀՀ ՏԿԱԻ նախարարին զեկուցվեց, որ նախատեսված աշխատանքներն ընթանում են ըստ ժամանակացույցի: Քննարկվեցին մարզպետերի կողմից բարձրացված մի շարք հարցեր, տրվեցին հանձնարարականներ: Խորհրդակցությանն անդրադարձ կատարվեց նաև նոյեմբերին կայանալիք հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի նիստին, ինչպես նաև Գյուղական համայնքների 5-րդ համաժողովին վերաբերող կազմակերպչական հարցերի:

Աղբյուրը՝ [www. http://mtaes.am](http://mtaes.am), 27.10.2015